ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 901-Ա/2 «16» հունիսի, 2023 թ.

«ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2023» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի հունիսի 5-ի N 821-Ա/2 հրամանով ձևավորված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հունիսի 14-ի N2 արձանագրությունը և ելնելով 2023 թվականի բյուջետային հատկացումների ծավալից՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի հուլիսի 1-ից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ ԺԱՆՆԱ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. հունիսի 16-ի
N 901-Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ «ԱՐՑԱԽԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-2023» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Կազմակերպություն	Թեմայի վերնագիր
1	23T/AA-006	Առստամյան Լիլյա Աշոտի Սարգսյան Տաթևիկ Հովհաննեսի	«Արցախի գիտական կենտրոն», ՊՈԱԿ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	Պոտենցիալ կենսաակտիվ պաշտպանված ոչ սպիտակուցային ամինաթթուների, դրանց հենքի վրա կառուցված պեպտիդների նպատակային սինթեզ, ազդեցության «in silico» և «in vitro» հետազոտում
2	23T/AA-003	Գալստյան Հասմիկ Գրիգորիի Մարդիյան Մարինե Արարատի	«Արցախի գիտական կենտրոն», ՊՈԱԿ «Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	Կյանքի որակը և օրգանիզմի ադապտացիոն հնարավորությունները որպես հիվանդությունների զարգացման ռիսկի գնահատման նոր մոտեցում
3	23T/AA-002	Իսրայելյան Արևիկ Լևոնի Տիրունի Ֆլորա Նուբարի	«Արցախի գիտական կենտրոն», ՊՈԱԿ ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոն» ՊՈԱԿ	Որոշ էկզոբազմաշաքարների համեմատական ազդեցության ուսումնասիրությունը հիվանդներից մեկուսացված մի շարք հակաբիոտիկակայուն բակտերիաների նկատմամբ
4	23T/AA-005	Հայրապետյան Վահրամ Տորիկի Ղազարյան Աստղիկ Սամվելի	«Արցախի գիտական կենտրոն», ՊՈԱԿ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ	Արցախի Հանրապետության թռչնաֆաունայի արդի վիճակը և մոնիթորինգը